

«ԿԱՍԿԱԾԻ ԴԵՊՐՈԻՄ ՀՕԳՈՒՏ ՄԵՂԱԴՐՅԱԼԻ» (IN DUBIO PRO REO)

Գոռ Հովհաննիսյան

Հագենի համալսարանի գերմանական և եվրոպական սահմանադրական և վարչական իրավունքի, ինչպես նաև միջազգային իրավունքի ամբիոնի դոցենտ, Սաքսոնիայի փաստաբանների պալատի անդամ, փաստաբան, իրավաբանական գիտությունների դոկտոր (Բեռլին), կառավարման գիտությունների մագիստրոս (Շպայեր)

Ա. Ներածություն

Հոդվածի վերնագիրը պարունակում է թերևս ամենահայտնի լատիներեն իրավական սկզբունքի անվանումը, որի ամբողջական ծևակերպումը հնչում է այսպես՝ «*in dubio pro reo iudicandum est*» («կասկածի դեպքում պետք է վճռել հոգուտ մեղադրյալի»)։ *In dubio pro reo* սկզբունքը¹ շատ հետաքրքիր ֆենոմեն է։ Մի կողմից՝ խոսքը մի իրավական սկզբունքի² մասին է, որը գոնե իր անվանումով ծանոթ է անգամ շատ ոչ իրավաբանների։ Մյուս կողմից՝ թվում է, թե իրավաբանների շրջանում զգալի անվստահություն կա դրա նշանակության առնչությամբ։ Իրավաբանները հաճախ սխալ պատկերացում ունեն նրա կիրառման ոլորտի մասին, ինչը պրակտիկայում բերում է ակամա սխալների, որոնք մարդկանց վրա շատ թանկ են նստում։ Հնարավոր է, որ դրա պատճառն այս սկզբունքը բավարար խորությամբ չուսումնասիրելն է։ Բայց անկախ պատճառներից՝ սույն հոդվածը նպատակ ունի լրացնելու այդ բացը։ Հոդվածի սկզբում վերացականորեն լուսաբանվում է *in dubio pro reo* սկզբունքը, այնուհետև օրինակների միջոցով ներկայացվում է նրա կոնկրետ կիրառումը։ Ընդ որում, հատուկ ընդգծվում են պրակտիկայում հաճախ պատահող սխալները՝ նպատակ ունենալով օգնելու խուսափել դրանցից։

Բ. Ընդհանուր ակնարկ

1. Սկզբունքի զարգացման պատմությունը և իրավահամեմատություն

Թե ինչքան հեռուն է գնում *in dubio pro reo* սկզբունքի պատմությունը, պարզ է։ Կարծիք կա, որ սկզբունքի ակունքները հասնում են մինչև հռոմեական քրեական իրավունք, անգամ մինչև *Արիստոտել*, թեև իրավապատմական մանրամասները, իհարկե, անվիճելի չեն։³ Որոշ հեղինակներ հարցականի տակ են դնում սկզբունքի գործողությունը հռոմեական քրեական իրավունքում և հռոմեական իրավունքի ռեցեպցիայի ժամանակաշրջանի⁴ քրեական դատավարությունում։⁵ Ռեցեպ-

¹ Գերմանական իրավունքում կոչվում է «*Zweifelsgrundsatz*» («կասկածի սկզբունք»)։ Ես նույնպես հոդվածում հաճախ կգործածեմ «*կասկածի սկզբունք*» հասկացությունը։

² Իրականում խիստ վիճելի է, թե արդյոք այս սկզբունքը պետք է դասել նյութական իրավունքին, թե դատավարական իրավունքին։ Տես Kotsoglu ZIS 2014, 31, 35; BeckOK StPO/Eschelbach, 45. Ed. 1.10.2022, StPO § 261 Rn. 47; Beulke, Strafprozessrecht, 13. Aufl. 2016, Rn. 25. Ես այն մոտեցման կողմնակից եմ, որ *in dubio pro reo* սկզբունքը նյութական իրավունքի նորմ է (տես Բ.IV. կետը)։

³ Huber JuS 2015, 596.

⁴ 11-րդ դարից մինչև 19-րդ դարը։

⁵ Տես *Holtappels*, Die Entwicklungsgeschichte des Grundsatzes „in dubio pro reo“, 1965 և *Sax in Spindel* [Hrsg.], Studien zur Strafrechtswissenschaft, Festschrift für Ulrich Stock zum 70. Geburtstag, 1966.

ցիայի արդյունքում ձևավորված հռոմեական կաթոլիկական իրավունքը (*ius commune*) ապացույցների անբավարարության դեպքի համար նույնիսկ մշակել էր (մեղմացված) **պատիժ կասկածի համար** և *absolutio ab instantia* (գործի ժամանակավոր կարճման մի տեսակ), որպեսզի խոչընդոտի մեղադրյալի արդարացումը¹: Լուսավորության դարաշրջանի պայքարն այս իրավական ինստիտուտների դեմ հող նախապատրաստեց *in dubio pro reo* սկզբունքի ճանաչման համար: Եվ միայն 19-րդ դարում ապացույցների ազատ գնահատման սկզբունքի ներմուծումից ի վեր այս սկզբունքը բոլոր դեպքերում հաստատված սովորութային իրավունք է²: Մեղավորության կանխավարկածները, որոնք «կոտրում են» *in dubio pro reo* սկզբունքը, նյութական քրեական իրավունքն այսօր այլևս չի ճանաչում:

Անգլոամերիկյան քրեական դատավարությունում, հակառակը, դեռ մինչև այսօր հայտնի է այսպես ընդված *affirmative defenses-ի* դեպքում ապացուցման բեռը մեղադրյալի վրա դնելը³:

Միե՛Կ 6-րդ հոդ. 2-րդ մասն ամրագրում է անմեղության կանխավարկածի սկզբունքը և դրանով ասում, որ ոչ ոք չի կարող դատապարտվել՝ առանց նրա մեղավորությունն օրենքին համապատասխան ապացուցված լինելու: Անձի մեղավորությունը համարվում է միայն այն ժամանակ ապացուցված, երբ դատարանը համոզվել է նրա մեղավորության հարցում: Ըստ **Միե՛Դ-ի** և **ԵՄ դատարանի** պրակտիկայի՝ եվրոպական մակարդակում նույնպես պիտի թույլատրելի լինեն մեղավորության հերքելի կանխավարկածները (այսինքն՝ ապացուցման բեռի շրջումը)⁴:

Հայկական իրավունքում *in dubio pro reo* սկզբունքն ամրագրված էր և՛ 1995 թ., և՛ 2005 թ. խմբագրությամբ Սահմանադրությունում (համապատասխանաբար 41-րդ հոդ. 2-րդ մասի 2-րդ նախադասությունում և 21-րդ հոդ. 2-րդ մասի 2-րդ նախադասությունում): 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրության տեքստից այն հանվել է: Սկզբունքն այժմ ամրագրված է գործող ՀՀ ՔրԴՕ 17-րդ հոդ. 4-րդ մասում:

II. Սկզբունքի ընդհանուր բնութագիրը և գործառույթը

Յուրաքանչյուր դատավարությունում պետք է լինի մի նորմ այն դեպքի համար, թե ինչ է լինելու, երբ ապացուցման ենթակա մի փաստ չի կարող ապացուցվել: Քրեական դատավարությունում դա *in dubio pro reo* կանոնն է (ՀՀ ՔրԴՕ 17-րդ հոդ. 4-րդ մաս): Կառուցվածքային տեսանկյունից այն ըստ էության **ապացուցման բեռի կանոն** է: Գերիշխող կարծիքը խուսափում է այս բնորոշումից, որովհետև անձի արդարացումը պետության համար բեռ չէ⁵: Բացի դրանից, քրեական իրավունքի համակարգում գոյություն չունի ապացուցման բեռի բաշխում. «ապացուցման բեռը» միշտ կրում է պետությունը: Գոյություն չունի նաև «ապացույցներ ներկայացնելու բեռ». դատարանի խնդիրն է ստուգել անձին արդարացնող հիմքերի առկայությունը և բացառել դրանք (տես ՀՀ ՔրԴՕ 22-րդ հոդ. 4-րդ մասը): Հետևաբար, ժամանակակից քրեական դատավարությունում մեղադրյալը կարող է դատապարտվել միայն այն դեպքում, երբ դատարանը համոզված է նրա մեղավորության հարցում⁶: Մեղադրյալի մեղավորության հարցում դատարանը կարող է համոզված լինել միայն այն դեպքում, երբ նա համոզված է, որ մեղադրյալը հակաիրավական եղանակով ու

¹ Stu Roxin/Schünemann, Strafverfahrensrecht, 30. Aufl. 2022, § 45 Rn. 57:

² Այս փաստը հարցականի տակ են դնում Montenbruck, In dubio pro reo, Aus normentheoretischer, straf- und strafverfahrensrechtlicher Sicht, 1985, ինչպես նաև Arzt, Ketznerische Bemerkungen zum Prinzip in dubio pro reo, 1997.

³ *Dubber*, Einführung in das US-amerikanische Strafrecht, 2005, 140 f.

⁴ Stu Միե՛Դ-ի 07.10.1988 թ. վճիռը «Սալաբիակուն ընդդեմ Ֆրանսիայի» գործով; EuGRZ 1992, 472 – «Pham Hoang»; Եվրոպական Համայնքների 28.01.2003 թ. դիրեկտիվի 1-ին հոդ. 2a-րդ կետը:

⁵ Stu Volk/Engländer, Grundkurs StPO, 10. Aufl. 2021, § 18 Rn. 18.

⁶ Stu ՀՀ ՔրԴՕ 17-րդ հոդ. 2-րդ մասը. «*Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը*»:

մեղավորությամբ իրականացրել է քրեական նորմի փաստակազմի բոլոր հատկանիշները¹ (տես ՀՀ ՔրԴՕ 342-րդ հոդ. 4-րդ մասը): Եթե դատարանն ունի կասկածներ, որոնք նա չի կարողացել փարատել գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա, ապա պարտավոր է արդարացնել մեղադրյալին (տես ՀՀ ՔրԴՕ 342-րդ հոդ. 2-րդ մասը և 347-րդ հոդ. 6-րդ մասը):

In dubio pro reo սկզբունքը *պոզիտիվ տեսանկյունից* ասում է, որ անձի դատապարտումը թույլատրելի է միայն դատավորի ներքին համոզմամբ հաստատված (ապացուցված) փաստական հանգամանքների հիման վրա (տես նաև ՀՀ ՔրԴՕ 22-րդ հոդ. 3-րդ մասի 1-ին նախ.): *Նեգատիվ տեսանկյունից*՝ սկզբունքից բխում է, որ սուսկ հնարավոր, անորոշ կամ կասկածելի մնացած հանգամանքներից ի վնաս մեղադրյալի ոչինչ բխեցվել չի կարող (տես ՀՀ ՔրԴՕ 22-րդ հոդ. 5-րդ մաս, 342-րդ հոդ. 4-րդ մասը):

Ընդ որում, **սկզբունքի առանցքային նշանակությունը** հետևյալն է. այն դատարանին հրահանգում է, թե նա ինչպես պետք է վարվի, *էրբ* չի կարողանում վերջնականապես հավաստիանալ դատավճիռ կայացնելու համար մի վճռորոշ փաստի հարցում: Բայց սկզբունքը ոչինչ չի ասում այն մասշտաբների մասին, որոնց համապատասխան դատավորը մի որևէ փաստ իրավունք ունի հավաստի համարելու²: Հետևաբար, սկզբունքը չի կարգավորում դատավորի ներքին համոզմունքի ձևավորման պրոցեսն այն իմաստով, թե իբր դատարանը *պարտավոր է կասկածներ ունենալ* որոշակի ապացուցողական փաստերի առկայության դեպքում կամ պարտավոր է իր դատավճռի հիմքում դնել բազմաթիվ հնարավոր եզրակացություններից միայն մեղադրյալի համար ամենաշահավետը: Սկզբունքը կարգավորում է այն հարցը, թե ինչ որոշում պետք է ընդունի դատարանը, երբ չի կարողանում վերջնական համոզմունք ձևավորել³: Այլ կերպ ասած՝ *in dubio pro reo* սկզբունքը չի խախտվում, երբ դատարանը *կասկածներ չունի*, թեև (օրինակ՝ մեղադրյալի տեսանկյունից) *պիտի ունենար*, այլ խախտվում է միայն այն դեպքում, երբ դատարանն անձին դատապարտում է, թեև կասկածներ **ունի**, այսինքն՝ *չնայած փաստի վերաբերյալ կասկածներ ունենալուն*, այդ փաստն օգտագործում է ի վնաս մեղադրյալի⁴: Հետևաբար, *in dubio pro reo* սկզբունքը միայն ասում է, թե ինչ պետք է լինի կասկածի դեպքում, բայց չի ասում, թե երբ պետք է կասկածել: Սկզբունքը միայն կիրառելի է, երբ դատարանը կասկածներ ունի⁵:

Այսպիսով, *in dubio pro reo* սկզբունքը **ոչ թե ապացուցման կանոն** է, այլ միայն **որոշում ընդունելու կանոն**⁶: Այն ոչ թե պետք է հաշվի առնվի դատարանի կողմից ապացույցները գնահատելիս, այլ միայն այն ժամանակ, երբ ապացույցների գնահատումն **ավարտվել է**, և դրանից հետո պարզ է դարձել, որ անձի մեղքի ու պատիժ նշանակելու համար որոշիչ մի փաստ չի կարող վստահորեն հաստատվել⁷: Այստեղից հետևում է, որ *in dubio pro reo* սկզբունքը չի կարող կիրառվել նաև ապացույցների գնահատման առանձին տարրերի նկատմամբ:

III. Կիրառման ոլորտը

In dubio pro reo սկզբունքը կապված է դատավարությունում հնարավոր այն ի-

¹ Joecks/Jäger StudKom StPO, 5. Aufl. 2022, Einleitung Rn. 232.

² BVerfG NJW 1988, 477; vgl. BVerfG BeckRS 2001, 22421

³ Eisenberg, Beweisrecht der StPO, 10. Aufl. 2017, Rn. 118; MüKoStPO/Miebach, 2016, § 261 Rn. 343.

⁴ BVerfG NSTZ-RR 2007, 381; Fischer, 67. Aufl. 2020, StGB § 1 Rn. 34; Meyer-Goßner/Schmitt/Schmitt, StPO, 63. Aufl. 2020, § 261 Rn. 26.

⁵ HK-GS/Brehmeier-Metz/Bröckers/Burghardt, 5. Aufl. 2022, StPO § 261 Rn. 9.

⁶ Roxin/Schünemann, Strafverfahrensrecht, 30. Aufl. 2022, § 45 Rn. 56; Volk/Engländer, Grundkurs StPO, 10. Aufl. 2021, § 18 Rn. 19; KK-StPO/Ott, 8. Aufl. 2019, StPO § 261 Rn. 63.

⁷ BGH NSTZ-RR 2009 91; NSTZ 2012 172; Eicker JA 2021, 330, 331; KK-StPO/Ott, 8. Aufl. 2019, § 261 Rn. 63.

րավիճակի հետ, որ որոշում կայացնելու համար կարևոր մի փաստ հնարավոր չէ պարզաբանել: Փաստը որոշում կայացնելու համար կարևոր է այն դեպքում, երբ նա այն նորմի նախապայմաններից մեկն է, որի կիրառումից կամ չկիրառումից է կախված դատավարության ելքը¹: Այդպիսի նորմերն սկզբունքորեն կարող են լինել նյութական կամ դատավարական բնույթի: Հետևաբար, հարց է ծագում, թե ո՞ր նորմերի դեպքում կարող է ընդհանրապես կիրառվել *in dubio pro reo* սկզբունքը:

1. Մեղավորության և պատիժ նշանակելու հետ կապված փաստերը

In dubio pro reo սկզբունքն *անհիջականորեն* կիրառվում է ամենից առաջ **մեղքի ու պատժի հարցի** նկատմամբ²: Այն վերաբերում է ինչպես դատարանի կողմից հաստատման ենթակա այն փաստերին, որոնք կարևոր են անձին մեղավոր ճանաչելու ու դատապարտելու համար (օրինակ՝ քրեական նորմի փաստակազմի հատկանիշ են), այնպես էլ այն փաստերին, որոնք քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք են (մասնավորապես, անհրաժեշտ պաշտպանությունը (ՀՀ ՔրՕ 32-րդ հոդ.), ծայրահեղ անհրաժեշտությունը (ՀՀ ՔրՕ 34-րդ հոդ.)), կամ այն փաստերին, որոնք նշանակություն ունեն նորմի իրավական հետևանքի՝ օրինակ՝ պատիժ նշանակելու համար, օրինակ՝ քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու հիմք են³ (մասնավորապես, հանցագործությունից կամովին հրաժարվելը (ՀՀ ՔրՕ 80-րդ հոդ.)): Եթե առաջին փաստերի հարցում դատարանի համար կասկածներ են մնում, ապա պետք է կայացնել արդարացման դատավճիռ: Սա անվիճելի է և կազմում է սկզբունքի կիրառման ոլորտի միջուկը⁴:

2. Քրեական հետապնդումը բացառող հանգամանքների հետ կապված փաստերը

Հարցական է, թե արդյոք *in dubio pro reo* սկզբունքը գործում է նաև այն դեպքում, երբ կասկածելի են սոսկ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների⁵ վերաբերյալ փաստերը (տես ՀՀ ՔրՂՕ 12-րդ հոդ.):

Քրեական **դատավարության** կարևորագույն **նախապայմաններն** են՝

- հայկական դատարանների իրավագործությունը,
- տարածքային և առարկայական ընդդատությունը քրեական գործը քննող դատարանին (ՀՀ ՔրՂՕ 260-րդ և 261-րդ հոդվածներ),
- քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքի հասած լինելը (ՀՀ ՔրՂՕ 12-րդ հոդ. 1-ին մասի 11-րդ կետ),
- դատավարությանը մասնակցելու կարողությունը,
- անձեռնմխելիության բացակայությունը (ՀՀ ՔրՂՕ 12-րդ հոդ. 1-ին մասի 5-րդ կետ),
- այլ դատարանում նույն գործի քննության բացակայությունը,
- նույն արարքի կապակցությամբ օրինական ուժի մեջ մտած դատավճիռի բացակայությունը (*ne bis in idem*⁶, ՀՀ ՔրՂՕ 12-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետ),
- քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետներն անցած չլինելը (ՀՀ ՔրՂՕ 12-րդ հոդ. 1-ին մասի 12-րդ կետ, ՀՀ ՔրՕ 83-րդ հոդ. 1-ին մաս),
- հանրային քրեական հետապնդման ժամկետներն անցած չլինելը (ՀՀ ՔրՂՕ 12-րդ հոդ. 1-ին մասի 7-րդ կետ, 192-րդ հոդ.),

¹ Eicker JA 2021, 330, 331.

² Roxin/Schünemann, Strafverfahrensrecht, 30. Aufl. 2022, § 45 Rn. 59.

³ BGH NStZ 2010, 102.

⁴ Օրինակները տես Գ.Ու.2.գ) կետի ներքո:

⁵ Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները գրականության մեջ հաճախ անվանվում են **դատավարության նախապայմաններ**:

⁶ *Ne bis in idem* սկզբունքի մասին մանրամասն տես Հովհաննիսյան, Դատական իշխանություն 04-06/2022, էջ 9-20:

• վավեր մեղադրական եզրակացության առկայությունը (ՀՀ ՔրԴՕ 202-րդ հոդ.),

• քրեական գործի վարույթն ստանձնելու մասին դատարանի որոշման առկայությունը (ՀՀ ՔրԴՕ 310-րդ հոդ. 2-րդ մաս),

• անձի կենդանությունը (ՀՀ ՔրԴՕ 12-րդ հոդ. 1-ին մասի 10-րդ կետ):

Քրեական հետապնդումը բացառող հանգամանքների դեպքում միանշանակ պատասխանի չի արժանանում այն հարցը, թե արդյոք *in dubio pro reo* սկզբունքը կիրառելի է որպես այդպիսին¹: Ըստ մի կարծիքի՝ նաև այն փաստի առնչությամբ կասկածի դեպքում, որը բացառում է քրեական հետապնդումը, պետք է ելնել մեղադրյալի համար նպաստավոր տարբերակից²: Մեկ այլ կարծիք հանգում է նույն արդյունքին, բայց դա չի հիմնավորում *in dubio pro reo* սկզբունքի կիրառմամբ, այլ նրանով, որ ըստ էության դատավճռի պարտադիր նախապայման է, որ դատավարության նախապայմաններն առկա են³: Գերմանիայի Դաշնային գերագույն դատարանը նույնպես խուսափում է այս հարցին հստակ պատասխանելուց: Նա պահանջում է յուրաքանչյուր առանձին դեպքի առանձնահատուկ հանգամանքներին պատշաճորդ որոշում, որը պիտի հաշվի առնի և՛ արդարության, և՛ իրավական անվտանգության սկզբունքները⁴: Դատարանն այնուամենայնիվ սկզբունքը կիրառելի է համարում վաղեմության ժամկետների,⁵ դատական միստին մասնակցելու տևական անհնարինության⁶ և կրկնակի դատապարտման արգելքի վերաբերյալ կասկածի դեպքում⁷:

3. Դատավարական այլ փաստերը

Որքանով կասկածներ կան դատավարական տեսանկյունից կարևոր այլ փաստերի առնչությամբ, գերիշխող կարծիքը ելնում է նրանից, որ կասկածի սկզբունքը չի գործում⁸: Դատավարական տեսանկյունից կարևոր փաստը պետք է ապացուցված լինի, հակառակ դեպքում այն չի կարող դրվել համապատասխան դատավարական նորմի կիրառման հիմքում⁹:

Օրինակ՝ հնարավոր չի լինում պարզել, թե արդյոք մեղադրյալը հարցաքննության ժամանակ ծեծի է ենթարկվել (ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդ. 4-րդ մաս՝ 18-րդ հոդ. 8-րդ մասի համակցությամբ): Ապացույցի օգտագործման արգելքը վրա է հասնում միայն այն դեպքում, երբ դրա ձեռք բերման կարգի խախտումն **ապացուցված է** (ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդ. 1-ին մաս): Հետևաբար, դատարանը խախտման առնչությամբ կասկած ունենալու դեպքում պետք է վճռի այսպես ասած «*in dubio contra reum*»¹⁰ (= *ի վնաս մեղադրյալի*):

¹ Beulke StrafProzR, 13. Aufl. 2016, Rn. 25 und 273 (Ziff. 5); տես, սակայն, Neuhaus NJW 1990, 1221:

² Joecks/Jäger StudKom StPO, 5. Aufl. 2022, Einleitung Rn. 67; Volk/Engländer, Grundkurs StPO, 10. Aufl. 2021, § 18 Rn. 21.

³ Meyer-Goßner/Schmitt/Schmitt, 63. Aufl. 2020, StPO § 206 a Rn. 7 mwN.

⁴ BGH NJW 1963, 1209.

⁵ BGH Beschl. v. 19.2.1963 – 1 StR 318/62, BeckRS 1963, 105660.

⁶ BGH Urt. v. 23.3.2001 – 2 StR 498/00, BeckRS 2001, 30169782: BGH NSTz 1984, 520. Մյուս կողմից՝ Դաշնային գերագույն դատարանը ելնում է նրանից, որ գործի վերջնական կարճումը պարտադիր չէ, երբ առկա է դատական միստին մասնակցելու միայն ժամանակավոր, բայց ոչ մշտական անհնարինությունը, տես BGH NSTz 1996, 242; նաև Meyer-Goßner/Schmitt/Schmitt, 63. Aufl. 2020, StPO § 206 a Rn. 7. Տես նաև Գ.Ու.1. կետում բերված օրինակը:

⁷ BGH NSTz 2010, 160.

⁸ Տես Volk/Engländer, Grundkurs StPO, 10. Aufl. 2021, § 18 Rn. 22.

⁹ Joecks/Jäger StudKom StPO, 5. Aufl. 2022, Vor § 137 Rn. 30.

¹⁰ Այստեղ լատիներենի մի փոքր դաս. քանի որ «*contra*» կապը պահանջում է Akkusativ (հայցական) հոլով, ուստի պետք է ասել ոչ թե «*reo*», այլ «*reum*»:

Այս հարցը, ինչպես երևում է բերված օրինակից, կարևորություն է ստանում հատկապես այն փաստերի դեպքում, որոնք մատնացույց են անում ապացույցների ձեռք բերման պրոցեսում տեղի ունեցած սխալները և կարող են խոչընդոտել այդ ապացույցների օգտագործումը: Իրավաբանները պետք է նման դեպքերում աչքի առաջ ունենան հատկապես ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդվածը¹:

4. Իրավական հարցերը

Իրավական հարցերի նկատմամբ, ի տարբերություն փաստերի, *in dubio pro reo* սկզբունքը կիրառելի չէ²: Ջուտ իրավական անորոշությունները (օրինակ՝ կիրառելի³ է կոնկրետ նորմը մի որոշակի դեպքի նկատմամբ) կարող են փարատվել և պետք է փարատվեն: Իրավական հարցերը պետք է լուծվեն դատարանի կողմից և չեն կարող կասկածելի մնալ: Դատավորը պարտավոր է վերջնական պատասխան տալ իրավական հարցերին, որովհետև նա պարտավոր է իմանալ օրենքն ու իրավունքը (*iura novit curia*): Հետևաբար, օրենքի մեկնաբանման նկատմամբ նույնպես *in dubio pro reo* սկզբունքը չի կիրառվում³, և մեղադրյալի համար անբարենպաստ մեկնաբանության ընտրությունն ամենևին չի խախտում *in dubio pro reo* սկզբունքը⁴: Մասնավորապես, իրավական հարցերի համար չկա մեկնաբանման մի կանոն, որը դատավորին պարտավորեցնում է ընտրել մեղադրյալի համար նպաստավոր մեկնաբանությունը: Նա ավելի շուտ պետք է մեկնաբանման ճանաչված մեթոդների օգնությամբ ընտրի **ճիշտ**, այլ ոչ թե մեղադրյալի համար բարենպաստ մեկնաբանությունը⁵:

Հայկական իրավաբանական գրականության մեջ, ցավոք, կարելի է հանդիպել նաև այս հարցի վերաբերյալ սխալ մոտեցման: Մասնավորապես, կա կարծիք, թե իբր *in dubio pro reo* սկզբունքը գործում է նաև այն ժամանակ, երբ կասկածներ են ծագում իրավական նորմերի ընտրության և կիրառության հարցում, և որ նորմերի կիրառման կասկածների դեպքում իրավական նորմը պետք է մեկնաբանվի և կիրառվի այն տարբերակով, որն առավել բարենպաստ է մեղադրյալի համար⁶: Այս մոտեցումը, ինչպես նշվեց, սխալ է, քանի որ դատավորը **միշտ** պարտավոր է վերջնական պատասխան տալ իրավական հարցերին, նա չի կարող դրանց առնչությամբ կասկածներ ունենալ:

5. Հատուկ դեպք՝ կասկածի սկզբունքի կիրառելիությունն ալիբիի ապացույցի նկատմամբ

Ալիբիի ապացույցի առարկան մեղադրյալի պնդումն է այն մասին, որ նա ենթադրյալ հանցագործության պահին եղել է ոչ թե հանցանքի վայրում, այլ մեկ ուրիշ տեղ⁷: Դատարանն ի՞նչ որոշում պետք է ընդունի, երբ այդ պնդումը (1) հնարավոր չէ ճշտել կամ (2) հերքվում է կամ (3) հաստատվում է դրա կեղծ լինելը:

Կասկածի սկզբունքի առնչությամբ անվիճելի է այն հիմնական կանոնը, որ նա գործում է միայն դատավճռի համար անմիջականորեն կարևոր փաստերի (այստեղ՝ հանցանքը մեղադրյալի կողմից կատարված լինելու) նկատմամբ, բայց չի գործում մեղադրյալի համար բարենպաստ այնպիսի **անուղղակի փաստանշանների** (այս-

¹ Այս հարցի վերաբերյալ տես Գ.Ու.2.ա) կետում բերված մյուս օրինակները:

² Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, Երևան 2020, էջ 292; Eisenberg, Beweisrecht der StPO, 10. Aufl. 2017, Rn. 119.

³ HK-GS/Brehmeier-Metz/Bröckers/Burghardt, 5. Aufl. 2022, StPO § 261 Rn. 10; Volk/Engländer, Grundkurs StPO, 10. Aufl. 2021, § 18 Rn. 24.

⁴ Rengier, Strafrecht Allgemeiner Teil, 14. Aufl. 2022, § 57 Rn. 1.

⁵ Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, Երևան 2020, էջ 292; Rengier, Strafrecht Allgemeiner Teil, 14. Aufl. 2022, § 5 Rn. 8.

⁶ Տես Թամազյան, ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (Հարությունյանի և Վաղարշյանի խմբ.), Երևան 2010, Սահմ. 21-րդ հոդ., էջ 259:

⁷ Կրկին լատիներենի փոքր դաս. «*alibi*» հասկացությունը կազմված է «*alius*» (մեկ ուրիշ) և «*ibi*» (այնտեղ) բաղադրիչներից:

տեղ՝ հանցանքի վայրում մեղադրյալի ներկայության/բացակայության) համար, որոնցից կարելի կլիներ եզրակացնել դատարանի որոշման համար անմիջականորեն կարևոր փաստը: Երբ դատարանը նման կողմնակի փաստանշանի առնչությամբ ոչ մի հաստատուն համոզմունք չունի (այսպես կոչված *non liquet*¹), ապա դրանից չի բխում, թե այն հոգուտ մեղադրյալի պետք է դիտել իբրև ապացուցված: Հակառակը, այդ կողմնակի փաստանշանը, չնայած իր ոչ հավաստիությանը, կարող է ու պետք է հաշվի առնվի ապացույցները գնահատելիս՝ դատարանի որոշման համար անմիջականորեն կարևոր փաստի առնչությամբ²: Հետևաբար, դատարանը չպետք է կասկածի դեպքում ճշմարիտ համարի պատահարի այն հնարավոր տարբերակը, որը նպաստավոր է մեղադրյալի համար³: Նա միայն չի կարող անբարենպաստ իրավական հետևանքներ բխեցնել մեղադրյալի համար:

Հետևաբար, երեք տարբերակների պատասխաններն են՝

1-ին տարբերակում անուղղակի փաստանշանի (հանցանքի վայրում ներկայության կամ բացակայության) առնչությամբ առկա է *«non liquet»*: *Non liquet*-ից չի բխում, թե մեղադրյալի համար նպաստավոր փաստանշանը (բացակայությունը) պետք է հոգուտ նրա դիտել իբրև ապացուցված: Ինքնին ալիբին կարող է հանգեցնել մեղադրյալի արդարացման միայն այն դեպքում, երբ այն ապացուցված է⁴:

2-րդ տարբերակի համար նույնպես այս կանոնները գործում են համապատասխանաբար. եթե ալիբին հերքվել է, ապա դրանից չի բխում, թե մեղադրյալը եղել է հանցանքի վայրում, այլ միայն, որ նա չի եղել իր պնդած (մեկ ուրիշ) տեղում:

Արդյունքում հարցն այլ կերպ չէ նաև **3-րդ տարբերակում**, որտեղ ալիբին (նույնիսկ) մերկացվել է իբրև սուտ: Անսովոր չի թվում, որ սեփական արդարացման համար պայքարող մեղադրյալը (թերևս նաև զուտ ենթադրաբար) ծանրաբեռնող ապացույցների ճնշման տակ կարծում է, որ ստիպված է դիմել ստախոսության: Թե ինչ հետևություններ կարելի է անել մեղադրյալի նման վարքից, կարելի է բազմաթիվ տեսանկյուններից քննարկել, բայց հնարավոր չէ այն ենթադրությունը, որ մեղադրյալը եղել է հանցանքի վայրում, էլ չասած, որ ամենևին հնարավոր չէ ենթադրել, թե նա է հանցագործը (ու սա է փնտրվող հիմնական փաստը)⁵:

IV. Հարաբերակցությունն անմեղության կանխավարկածի հետ

Անմեղության կանխավարկածն ամրագրված է ՀՀ Սահմ. 66-րդ հոդվածում, ՀՀ ՔրԴՕ 17-րդ հոդ. 1-ին և 2-րդ մասերում, ինչպես նաև ՄԻԵԿ 6-րդ հոդ. 2-րդ մասում: Բացի դրանից, այս սկզբունքը բխում է իրավական պետության սկզբունքից: Ըստ անմեղության կանխավարկածի՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Այս սկզբունքը գործում է նաև մինչդատական վարույթում, երբ դեռ մեղադրական եզրակացություն չի ներկայացվել դատարան⁶:

Ի՞նչ հարաբերակցության մեջ են գտնվում անմեղության կանխավարկածն ու *in dubio pro reo* սկզբունքը: Թեև հայ օրենսդիրը *in dubio pro reo* սկզբունքը կարգավորել է ՀՀ ՔրԴՕ «Անմեղության կանխավարկածը» վերնագիրը կրող 17-րդ հոդ. 4-րդ մասում, այնուամենայնիվ չի կարելի հավասարության նշան դնել այս երկու սկզբունքների միջև: *In dubio pro reo* սկզբունքն անմեղության կանխավարկածի

¹ Ուշադրություն, կրկին լատիներենի մի փոքր դաս. *«liquet»* նշանակում է *«պարզ է»*, հետևաբար *«non liquet»* նշանակում է *«(ոչինչ) պարզ չէ»*: *«Res mihi non liquet»* (*«գործն ինձ համար պարզ չէ»*) պատճառաբանությամբ հռոմեացի դատավորը կարող էր ձեռնպահ մնալ կոլեգիալ որոշումից: Տես Huber JuS 2015, 596, 597:

² BGH NSTZ 2001, 609 mwN; BGH NSTZ-RR 2002, 243; 2000, 485.

³ BGH NSTZ 2001, 609.

⁴ Տես բառացիորեն BGHSt 25, 285:

⁵ Huber JuS 2015, 596, 597.

⁶ MüKoStPO/Kudlich, 2. Aufl. 2023, Einleitung Rn. 203.

հետևանքն է: Վերջինս պահանջում է, որ անձի մեղքն ապացուցվի դատարանի կողմից: Եթե դա չի հաջողվում, ապա կիրառվում է *in dubio pro reo* սկզբունքը¹: Երկու սկզբունքներում էլ ի վերջո արտացոլված է ապացուցման բեռը, որը քրեական իրավունքում կրում է պետությունը, բայց ոչ մեղադրյալը (տես վերևում):

Անմեղության կանխավարկածի և *in dubio pro reo* սկզբունքի տարբերակման համար իբրև կողմնորոշիչ կարող է ծառայել հետևյալ կշռադատությունը. քանի որ անմեղության կանխավարկածը կիրառելի է մինչև անձի մեղքի ապացուցումը, ուստի այն իսկական **դատավարական նորմ** է²: Այն, փաստորեն, կարգավորում է, թե ինչպես պիտի ընթանա քրեական դատավարությունը, որի նպատակը (նաև) փաստերի ապացուցումն է: *In dubio pro reo* սկզբունքը **նյութական նորմ** է և պետք է կիրառվի այն դեպքում, երբ դատարանն արդեն պարզել է, թե որոնք են դատավճիռ կայացնելու համար կարևոր փաստերը, և արձանագրում է, որ ինքը կասկածներ ունի որոշակի հանգամանքների առնչությամբ: Այստեղից բխում է, որ քրեական դատավարությունում ժամանակագրական տեսանկյունից անմեղության կանխավարկածը կիրառվում է **նախքան** դատարանի հեռանալը խորհրդակցական սենյակ, որտեղ նա գնահատում է ապացույցները: Այն պահից, երբ ապացույցների գնահատումն ավարտվել է, և հայտնի է, թե ինչն է ապացուցված և ինչը՝ ոչ, պետք է կիրառել *in dubio pro reo* սկզբունքը: Այդ պատճառով կարելի է խորհրդակցական սենյակ գնալը պատկերացնել իբրև ժամանակային խզում անմեղության կանխավարկածի և *in dubio pro reo* սկզբունքի կիրառման ոլորտի միջև³:

Գ. Սկզբունքի նշանակությունը դատավարության տարբեր փուլերում

Քրեական դատավարության ողջ ընթացքում նյութական ու դատավարական խնդիրները միշտ միահյուսված են: Դատախազը և դատավորը պիտի լուծեն դրանք և լուծումը ներկայացնեն փաստաթղթի ձևով: Փորձը ցույց է տալիս, որ իրավաբանները հաճախ կամ ընդհանրապես ուշադրություն չեն դարձնում *in dubio pro reo* սկզբունքին, կամ, հակառակը, սկզբունքի մասին սխալ պատկերացում ունենալու պատճառով խնդիրներ են տեսնում այնտեղ, որտեղ դրանք իրականում չկան, ու այդպիսով սկզբունքը սխալ են կիրառում:

Այդ պատճառով ստորև ցույց է տրվում, թե ինչպես կարող է ազդել *in dubio pro reo* սկզբունքը դատավարության տարբեր փուլերի վրա, և ներկայացվում են այդ ընթացքում հաճախ թույլ տրվող սխալները:

I. Մեղադրական եզրակացությունը

Նեգատիվ օրինակ. «Քրեական գործի վարույթը ենթակա է կարճման ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետի և 12-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի հիման վրա *in dubio pro reo* սկզբունքի պատճառով: Դատախազությունը չի կարողացել համոզմունք ձևավորել այն հարցում, որ հանցանք կատարողը եղել է մեղադրյալը...»:

Դատախազը պարտավոր է ամենից առաջ ստուգել, թե արդյոք առկա են անձի կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար փաստեր (ՀՀ ՔրԴՕ 189-րդ հոդ. 1-ին մաս): Անձի կողմից հանցանքի կատարումը վկայող փաստերը բավարար են, եթե բոլոր ապացույցների նախնական գնահատման հիման վրա դատախազը հանգում է հետևության, որ մեղադրյալին վերագրվող հանցանքի համար իրավասու դատարանի կողմից նրա դատապարտումը մեծապես հավանական է (ՀՀ ՔրԴՕ 199-րդ հոդ. 1-ին մաս): Դատախազությունը, փաստորեն, **կանխատեսում** է անում, որի դեպքում նա ունի գնահատման որոշակի ազատություն⁴:

Դատախազությունը մեղադրական եզրակացությամբ ստացված վարույթի նյութերն ուսումնասիրելիս (ՀՀ ՔրԴՕ 204-րդ հոդ.) և մեղադրական եզրակացությունը

¹ MüKoStPO/Kudlich, 2. Aufl. 2023, Einleitung Rn. 203; տես նաև Huber JuS 2015, 596:

² Դա է ակնարկում նաև BVerfG NJW 2013, 1058 Rn. 61:

³ Eicker JA 2021, 331 f.

⁴ Meyer-Goßner/Schmitt/Schmitt, 63. Aufl. 2020, StPO § 203 Rn. 2.

հաստատելիս (ՀՀ ՔրԴՕ 205-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետ) **չպետք է հաշվի առնի** *in dubio pro reo* սկզբունքը¹: Անգամ եթե դատախազությունը վստահ չէ, որ վերջում մեղադրյալը կդատապարտվի, դա դեռ չի խոսում մեղադրական եզրակացությունը վարույթի նյութերի հետ իրավասու դատարան հանձնելու դեմ (ՀՀ ՔրԴՕ 206-րդ հոդ. 1-ին մաս): Անվստահությունը ներհատուկ է ցանկացած կանխատեսողական որոշմանը: Այն, որ առկա է որոշակի ռիսկ այն իմաստով, որ դատարանը հետագայում համոզմունք ձեռք չի բերի գործի փաստական հանգամանքների առնչությամբ, դատախազությանը չի ստիպում կարճել գործի վարույթը: Հետևաբար, դատախազն իրավունք չունի *in dubio pro reo* փաստարկով հրաժարվել մեղադրական եզրակացությունը հաստատելուց կամ դրանով պատճառաբանել ՀՀ ՔրԴՕ 13-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետի և 12-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետի հիման վրա գործի կարճումը:

Վերևի օրինակում բերված փաստարկը, այսպիսով, սխալ է, և պետք է անպայման խուսափել դրանից: Անգամ եթե *վերջնարդյունքում* պարզվի, որ գործի կարճումն արդարացված կլինի, որովհետև անձի դատապարտումն անհավանական է, միևնույն է, կարճումը չպետք է պատճառաբանել *in dubio pro reo* սկզբունքով:

Ամեն դեպքում հնարավոր է, որ կասկածի սկզբունքը, որը դատարանը պետք է հաշվի առնի իր հետագա որոշման դեպքում, որոշակի ազդեցություն ունենա արդեն մեղադրական եզրակացության վրա: Օրինակ՝ այն դեպքում, երբ դատախազությունը մեղադրական եզրակացությունը հաստատելու հարցը լուծելիս արդեն կարող է ելնել նրանից, որ դատարանը իր հետագա որոշման դեպքում *in dubio pro reo* սկզբունքի կիրառման հիման վրա անձին կարդարացնի²:

II. Վերդիկտը

Կասկածի սկզբունքը պետք է, որպես կանոն, հաշվի առնի դատարանը, երբ նա վերդիկտ ու դատավճիռ է կայացնում (ՀՀ ՔրԴՕ 342-րդ և 347-րդ հոդվածներ): Այստեղ պետք է ուշադիր լինել, թե գործով որոշում ընդունելու ո՞ր փուլում կասկածի սկզբունքը պետք է հաշվի առնվի կամ, հակառակը, ոչ մի դեր չպիտի խաղա: Դրա համար պետք է հիշել, թե դատարանը գործի քննության ո՞ր փուլում ինչ հարցեր է լուծում:

1. Նախնական դատալսումները և քրեական հետապնդումը բացառող հանգամանքները

Ստանալով քրեական գործը՝ դատավորը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին (ՀՀ ՔրԴՕ 310-րդ հոդ. 2-րդ մաս): Ընդ որում, նախնական դատալսումները պարտադիր են բոլոր քրեական վարույթներով (ՀՀ ՔրԴՕ 310-րդ հոդ. 1-ին մաս):

Նախնական դատալսումների ընթացքում դատարանն այլ հարցերի թվում քննարկման առարկա է դարձնում նաև քրեական հետապնդումը բացառող հանգամանքները (= դատավարության նախապայմանները, տես ՀՀ ՔրԴՕ 311-րդ հոդ. 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերը): Ընդ որում, նորմում նշված հարցերը քննարկվում են այնտեղ նշված հերթականությամբ: Սկզբում պետք է քննարկել այն հարցը, թե արդյոք առկա են քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ: Եթե այդպիսիք առկա չեն, ապա քննարկման առարկա է դարձվում ապացույցների ծավալի և թույլատրելիության հարցը:

Խնդիր 1: Բ-ն կասկածվում է խարդախության մեջ (ՀՀ ՔրԴՕ 255-րդ հոդ. 1-ին մաս): Նա Օ-ին հեռախոսագրույցի միջոցով խաբել է, թե նրա թոռը վատ դրության մեջ է: Դրան ի պատասխան Օ-ն նրան է հանձնել 50.000 դրամ գումար (մանր չա-

¹ OLG Köln SpuRt 2019, 134; Joecks/Jäger StudKom StPO, 5. Aufl. 2022, Vor § 203 Rn. 2.

² LG Nürnberg-Fürth NZWiSt 2021, 268, 269; BeckOK StPO/Ritscher, 45. Ed. 1.10.2022, StPO § 203 Rn. 5; KK-StPO/Schneider, 8. Aufl. 2019, StPO § 203 Rn. 10.

փի վնաս, տես ՀՀ ՔրՕ 3-րդ հոդ. 1-ին մասի 17-րդ կետը): Սակայն այլևս հնարավոր չէ հստակ պարզել հանցանքը կատարելու ժամանակը: Հաստատ է միայն, որ դատելի է ունեցել 2015 թ. հունվարի կեսի և 2015 թ. մարտի կեսի արանքում: Բ-ն միայն 2020 թ. փետրվարին է հայտնաբերվում, և նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում է ընդունվում 2020 թ. փետրվարի 25-ին:

Ինչպես արդեն վերևում նշվել է (տես Բ.Ու.Ս.Ս. կետը), քրեական գործի քննության ընթացքում կարող են կասկածելի լինել փաստեր, որոնք վերաբերում են **քրեական հետապնդումը բացառող հանգամանքներին**: Նման դեպքում դատարանն սկզբում պետք է արձանագրի, որ վիճելի է այն հարցը, թե արդյոք այստեղ ընդհանրապես կիրառելի է *in dubio pro reo* սկզբունքը: Ինչպես արդեն պարզաբանվել է, այդ գիտական բանավեճը գործնականում հազվադեպ է որոշիչ նշանակություն ունենում, այնպես որ դատարանը, որպես կանոն, այդ վեճը լուծելու կարիք չի ունենում:

Խնդիր 1-ում պարզ չէ, թե արդյոք անցել են քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Քանի որ սովորական խարդախության համար սահմանված առավելագույն պատիժը չի գերազանցում 2 տարի ժամկետով ազատազրկումը (նորից տես ՀՀ ՔրՕ 255-րդ հոդ. 1-ին մասը), ուստի այն ոչ մեծ ծանրության հանցանք է (ՀՀ ՔրՕ 17-րդ հոդ. 2-րդ մաս), որի համար օրենսդիրը նախատեսել է վաղեմության **հնգամյա** ժամկետ (ՀՀ ՔրՕ 83-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետ): Այդ հնգամյա ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտվելուն հաջորդող օրվանից մինչև անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշում կայացնելը (ՀՀ ՔրՕ 83-րդ հոդ. 2-րդ մաս): Քանի որ պարզ չէ, թե երբ է Օ-ն Բ-ին հանձնել զումարը, ուստի անորոշ է նաև վաղեմության ժամկետի ավարտի օրը: Եթե ելնում ենք նրանից, որ զումարը հանձնվել է 2015 թ. հունվարին, ապա 2020 թ. հունվարին վաղեմության հնգամյա ժամկետն արդեն անցած կլինի, քանի որ 2020 թ. փետրվարի 25-ին հարուցված քրեական հետապնդումն այլևս չէր կարող կասեցնել այդ ժամկետի ընթացքը: Ամեն ինչ այլ կլինի, եթե ելնենք նրանից, որ զումարը հանձնվել է 2015 թ. մարտին: Վերևում (Բ.Ու.Ս.Ս. կետում) ներկայացված մոտեցման համաձայն՝ այն փաստի վերաբերյալ կասկածը, թե արդյոք անցել է անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը, պետք է գործի հօգուտ մեղադրյալի: Այդ պատճառով դատարանը պիտի ելնի նրանից, որ առկա է քրեական հետապնդումը բացառող հանգամանք՝ համաձայն ՀՀ ՔրՕ 12-րդ հոդ. 1-ին մասի 12-րդ կետի, և դադարեցնի Բ-ի նկատմամբ քրեական հետապնդումը (ՀՀ ՔրՕ 315-րդ հոդ. 1-ին մաս):

2. Հիմնական դատալսումները և նյութական քրեական իրավունքը

Նախնական դատալսումների փուլում լուծման ենթակա բոլոր հարցերի քննարկումն ավարտելուց հետո դատարանը կայացնում է հիմնական դատալսումներ նշանակելու մասին որոշում (ՀՀ ՔրՕ 322-րդ հոդ. 1-ին մաս): Հիմնական դատալսումների փուլում դատարանը հետազոտում է գործով ներկայացված ապացույցները (ՀՀ ՔրՕ 325-336-րդ հոդվածներ) և հետո գնահատում դրանք:

ա) Ապացույցների գնահատումը

Հիմնական դատալսումների ավարտից հետո դատարանը կայացնում է վերդիկտ (ՀՀ ՔրՕ 341-րդ հոդ.): Դրա համար դատարանն սկզբում գնահատում է ձեռք բերված ապացույցները: Այդ գնահատման արդյունքը մեղադրյալին վերագրվող փաստական հանգամանքների հաստատումն է, այսինքն՝ այն փաստերը շարադրելը, որոնցում դատարանը հանդգլած (չ)է (ՀՀ ՔրՕ 342-րդ հոդ. 1-ին մասի 1-ին կետ): Դրանից հետո դատարանը իրավաբանորեն որակում է այդ փաստերը, այսինքն՝ դրանք ենթադասում է քրեական նորմի փաստակազմի ներքո (սուբսում-

ցիա¹) (ՀՀ ՔրԴՕ 342-րդ հոդ. 2-րդ և 3-րդ մասեր), որպեսզի այդ եղանակով պարզի մեղադրյալի կողմից արարքի կատարման (ՀՀ ՔրԴՕ 342-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետ) և նրա մեղքի (ՀՀ ՔրԴՕ 342-րդ հոդ. 1-ին մասի 4-րդ կետ) հարցը:

Եվ դատավորի համար այստեղ որոշիչ նշանակություն ունի կասկածի սկզբունքը վերդիկտում ձիշտ տեղում կամ, որ ավելի կարևոր է, ոչ սխալ տեղում կիրառելը:

Խնդիր 2: Մեղադրյալ Կ-ն հարցաքննվում է քննիչ Պ-ի կողմից և տալիս է ինքնախոստովանական ցուցմունք: Ավելի ուշ գործի հիմնական դատալսումների ժամանակ (ՀՀ ՔրԴՕ 43-րդ գլուխ) Պ-ն հարցաքննվում է Կ-ի ցուցմունքների բովանդակության վերաբերյալ, քանի որ Կ-ն վիճարկում է հարցաքննության արձանագրության թույլատրելիությունը (տես ՀՀ ՔրԴՕ 331-րդ հոդ. 4-րդ մասը): Կ-ն հիմա պնդում է, թե Պ-ն իրեն ծեծելու միջոցով է ստիպել տալ ինքնախոստովանական ցուցմունք, ինչը Պ-ն հերքում է: Դատարանը չի կարողանում աներկբա համոզմունք ձևավորել Կ-ի պնդման վերաբերյալ:

Խնդիր 3: Քննիչ Ռ-ն հարցաքննում է մեղադրյալ Լ-ին: Լ-ն տալիս է ինքնախոստովանական ցուցմունք: Ավելի ուշ գործի հիմնական դատալսումների ժամանակ Լ-ն պնդում է, թե Ռ-ն իրեն չի պարզաբանել լռելու իր իրավունքը (ՀՀ ՔրԴՕ 221-րդ հոդ. 3-րդ մասի 3-րդ նախ.) և հրաժարվում է իր ինքնախոստովանությունից: Դատարանը չի կարողանում հարցը վերջնականորեն պարզել, մանավանդ որ մեղադրյալին իր իրավունքներին ծանոթացնելը գրավոր ձևով արձանագրված չէ:

Դատարանը, որպեսզի պարզի, թե ինքն ինչ փաստական համոզմունք ունի, սկզբունքորեն պարտավոր է գնահատել հիմնական դատալսումների ժամանակ ներկայացված բոլոր ապացույցները և դրանք դնել վերդիկտի հիմքում (ՀՀ ՔրԴՕ 336-րդ հոդ. 2-րդ մաս):

Ինչպես վերևում արդեն նշվել է (տես Բ.Ո. կետը), կասկածի սկզբունքը կիրառելի չէ ապացույցների գնահատման ժամանակ: Կասկածի սկզբունքից հատկապես չի բխում, թե դատարանն ապացույցները գնահատելիս պիտի ելնի մեղադրյալի համար նպաստավոր իրավիճակներից նաև այն դեպքում, երբ դրա համար չկան կոնկրետ հիմքեր: Հօգուտ մեղադրյալի որևէ բան ենթադրելը, հակառակը, թույլատրելի է այն դեպքում, երբ դատավորը դրա համար ունի իրական հիմքեր²: Հենց այստեղ է երևում, որ կասկածի սկզբունքը ոչ թե ապացուցման, այլ որոշում ընդունելու կանոն է: Այն չի ասում, թե *արդյոք* դատարանը մի փաստի առնչությամբ կասկածներ *պիտի ունենար*, այլ, թե ինչպես պիտի կիրառվի իրավունքը, *երբ* նա այդպիսի կասկածներ *ունի: In dubio pro reo* սկզբունքը կիրառվում է ապացույցների գնահատումից *հետո*, ոչ թե դրա *ժամանակ*:

Այդ պատճառով

Նեգատիվ օրինակ. «Թեև վկա Վ-ն հաստատեց մադադրյալի կողմից հանցանքի կատարումը, այնուամենայնիվ պետք է հօգուտ մեղադրյալի (*in dubio pro reo*) ելնել նրանից, որ մեղադրյալը չէ հանցագործը: Վ-ի ցուցմունքը չի կարելի հիմք ընդունել, որովհետև ...»:

Այստեղ հիմնական սխալը կասկածի սկզբունքի վկայակոչումն է: Թեև հնարավոր է, որ *վերջնական արդյունքում* գործով ձեռք բերված ապացույցները, հաշվի առնելով նաև Վ-ի ցուցմունքը, չբավարարեն մեղադրյալի կողմից հանցանքը կատարելու փաստի առնչությամբ համոզմունք ձևավորելու համար, բայց այստեղ տրամաբանորեն *in dubio pro reo*-ն չի կարող որևէ դեր խաղալ: Այն դատավորը, որն այսպես է փաստարկում, առաջադրում է ապացուցման մի կանոն, որը գոյութ-

¹ Իրավաբանական որակման (սուբսումցիայի) մասին մանրամասն տես Հովհաննիսյան, Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն, Երևան 2020, էջ 248-261:

² BGH NStZ-RR 2005, 209 = BeckRS 2005, 04570.

յուն չունի: Այսպես վարվելը, ըստ էության, ՀՀ ՔրԴՕ 105-րդ հոդ. 2-րդ մասի խախտում է:

Այնուամենայնիվ կասկածի սկզբունքը կարող է անուղղակիորեն քննարկվել ապացույցների գնահատման ժամանակ: Դա այն դեպքում է հնարավոր, երբ դատարանը պարտավոր է ստուգել, թե արդյոք ներկայացված մի ապացույցի առնչությամբ առկա է դրա օգտագործման արգելք, բայց նա կասկած ունի այն դատավարական փաստի առնչությամբ, որը կարող է լինել օգտագործման արգելքի պատճառ: Այստեղ արդեն ծագում է *in dubio pro reo* սկզբունքն այն փաստերի նկատմամբ կիրառելու հարցը, որոնք կարևոր են դատավարական հարցերի համար¹:

Խնդիր 2-ում դատարանը պիտի ապացույցների գնահատման շրջանակում անդրադառնա այն հարցին, թե արդյոք ինքն իրավունք ունի օգտագործելու Պ-ի ցուցմունքը: Այստեղ հնարավոր է ապացույցի օգտագործման արգելք՝ ըստ ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդ. 4-րդ մասի և 18-րդ հոդ. 8-րդ մասի 2-րդ նախադասության, եթե իսկապես Կ-ն ծեծի է ենթարկվել տեղեկություններ տալու նպատակով: Բայց այն կարևոր փաստը, որը կարող է դառնալ ապացույցի օգտագործման արգելքի պատճառ, այն է՝ ծեծը, հենց կասկածելի է: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել, որ ապացույցի (ան)օգտագործելիության հարցը որոշվում է ՀՀ ՔրԴՕ 97-րդ հոդ. 1-ին մասի կանոնով, ըստ որի՝ վարույթի ընթացքում ծեռք բերված ապացույցները համարվում են թույլատրելի (հետևաբար՝ օգտագործելի), քանի դեռ պատշաճ իրավական ընթացակարգով հակառակը չի հաստատվել: Դա նշանակում է, որ կասկածի սկզբունքն այստեղ չի գործում: Դատարանը, հակառակը, իրավունք ունի ելնելու ապացույցի անօգտագործելիությունից միայն այն դեպքում, երբ համոզված լինի դրա նախապայմանների առկայության, այստեղ՝ Կ-ի ծեծի ենթարկված լինելու մեջ: Հետևաբար, խնդիր 1-ում դատարանն իրավունք ունի օգտագործելու Պ-ի ցուցմունքը:

Նման պատկեր է նաև **խնդիր 3-ում**: Այն հարցի առնչությամբ, թե արդյոք մեղադրյալի իրավունքների պարզաբանում տեղի ունեցել է՝ ըստ ՀՀ ՔրԴՕ 221-րդ հոդ. 3-րդ մասի, կասկածի սկզբունքը չի գործում: Այնուամենայնիվ նման դեպքերում պետք է ելնել նրանից, որ իրավունքների պարզաբանում տեղի չի ունեցել, եթե չկան պարզաբանման մասին վկայող փաստացի տվյալներ, և պարզաբանման փաստը նաև չի արձանագրվել ու մեղադրյալի կողմից չի ստորագրվել²: Բայց այս փաստարկը հիմնված չէ *in dubio pro reo* սկզբունքի կիրառման վրա:

բ) Հաստատված փաստերը շարադրելը

Խնդիր 4: Ա-ն մեղադրվում է դիտավորյալ մարմնական վնասվածք պատճառելու համար: Դատարանի կարծիքով՝ ծեռք բերված ապացույցներից բխում է, որ հաստատված չէ, որ հանցագործը Ա-ն է, մանավանդ որ Բ-ն նույնպես կարող է եղած լինել հանցագործը: Դատարանը չգիտի՝ ինքը դատավճռում փաստերը շարադրելիս սա հենց այսպես գրելու իրավունք ունի³, թե՞ կասկածի սկզբունքի պատճառով ստիպված է Բ-ին պոզիտիվ ձևով ներկայացնել իբրև հանցագործ:

Վերդիկտում պետք է նշվեն դատախոսների ընթացքում հետազոտված թույլատրելի ապացույցները և դրանց հիման վրա դատարանի կողմից հաստատված կամ հերքված փաստական հանգամանքները: Վերդիկտը կարդացող մի անկողմնակալ երրորդ անձ պետք է հեշտությամբ հասկանա, թե արդյոք դատարանը մի որևէ փաստի առնչությամբ ամբողջապես համոզված է, թե նա կասկածներ ունի:

Անշուշտ այս ամենը չի բխում կամ միայն խիստ անուղղակիորեն է բխում կասկածի սկզբունքից: Բոլոր դեպքերում *in dubio pro reo* սկզբունքը վերացականորեն և մի կոնկրետ քրեական նորմից կտրված ձևով չի ստիպում, որ դատարանը մի

¹ Տես Բ.III.3. կետը:

² BGH NStZ-RR 2007, 80.

փաստ, որում նա համոզված չէ, դիտի իբրև հերքված կամ, առավել ևս, նեգատիվ համոզմունք ձևացնի, այսինքն՝ վերդիկտում նշի, թե համոզված է դրա հակառակում¹: Այլ կերպ ասած՝ եթե դատարանը համոզված չէ մի փաստի առնչությամբ, ապա նա իրավունք ունի վերդիկտում հենց այդպես էլ նշելու իր կասկածը:

Խնդիր 4-ում դատարանն անշուշտ կարող է նշել, որ հաստատված չէ, որ Ա-ն է հանցագործը, այլ, որ նաև Բ-ն կարող է եղած լինել հանցագործը: Ղատարանը կարող է ու պարտավոր է բացահայտել իր կասկածները:

գ) Արարքի իրավական գնահատականը

Երբ ապացույցների գնահատումն արդեն ավարտված է, և դատարանն արդեն պարզել է, թե ինքը ո՞ր փաստական հանգամանքներն է հաստատված կամ հերքված համարում կամ ո՞ր փաստերի առնչությամբ կասկածներ ունի, սկսվում է արարքի իրավական գնահատումը: Այստեղ դատարանն արդեն քննարկման առարկա է դարձնում նյութական իրավունքը, մասնավորապես՝ մեղադրյալի **մեղավորության** կամ նրան **արդարացնելու** հարցը:

Խնդիր 5: Ա-ին մեղադրանք է առաջադրվել մեկ ուրիշին ծանր մարմնական վնասվածք պատճառելու համար, քանի որ նա կաստետով ուժգին հարվածել է Բ-ի դեմքին (ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետ և 2-րդ մասի 6-րդ կետ): Հիմնական դատալսումների արդյունքում դատարանը թեև ապացուցված է համարում արարքի կատարումը, բայց նրա համար պարզ չէ, թե արդյոք Ա-ն գործադրել է հենց կաստետ, թե բռունցքին փաթաթած մետաղալար:

Տարբերակ: Հաստատվում է բռունցքով հարվածը: Ղատարանը հավանական է համարում կաստետի կամ նման մի առարկայի գործադրումը, բայց չի կարողանում հաստատ համոզվել այն բանում, որ դրանք իսկապես գործադրվել են:

Կասկածի սկզբունքն առաջին հերթին կիրառվում է արարքի նյութաիրավական գնահատման ժամանակ: Ուշադիր նայելիս կտեսնենք, որ այն սկզբում դեր է խաղում գործով առկա փաստերը համապատասխան նյութական քրեական նորմի փաստակազմի ներքո դասելու (սուբսումցիայի) ժամանակ: Հետևաբար, *in dubio pro reo* սկզբունքը երբեք չի կարող դիտարկվել մեկուսի, այլ միայն համապատասխան նյութական քրեական իրավունքի հետ միասին²: Սա ևս մեկ լրացուցիչ փաստարկ է այն բանի օգտին, թե ինչու ապացույցները գնահատելիս կասկածի սկզբունքը որևէ դեր չի կարող խաղալ: Ապացույցների գնահատումն անկախ է ավելի ուշ տեղի ունեցող իրավաբանական որակումից, այսինքն՝ ապացույցների գնահատմամբ հաստատված փաստերը քրեական նորմի ներքո դասելուց: Ղատավճռում դա կերևա այն դեպքում, երբ պատասխանատվությունը հիմնավորող փաստերը, որոնք շարադրված են մեղադրական եզրակացությունում, չեն հաստատվի հիմնական դատալսումների արդյունքում:

Եթե մի փաստ կասկածելի է, ապա իրավաբանական որակման հիմքում պետք է դրվեն հնարավոր փաստական այլընտրանքները: Եթե համապատասխան այլընտրանքները հանգեցնում են նույն արդյունքին, այսինքն՝ նույն պատասխանատվությանը, ապա դատական ակտի եզրափակիչ մասը պետք է ձևակերպել հենց այդպես: Նման դեպքում *in dubio pro reo* սկզբունքի կիրառման համար տեղ չի մնում, որովհետև չկա մեղադրյալի համար ավելի նպաստավոր փաստական այլընտրանք³:

Խնդիր 5-ում երկու տարբերակում էլ Ա-ին ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետով և 2-րդ մասի 6-րդ կետով ծանր մարմնական վնասվածք պատճառելու հա-

¹ Eicker JA 2021, 330, 334.

² KK-StPO/Tiemann, 9. Aufl. 2023, StPO § 261 Rn. 81 ff.

³ Eicker JA 2021, 330, 335.

մար դատապարտելն արդարացված է, որովհետև կաստետ կիրառելու տարբերակում նրա արարքը կորակվեր իբրև *գենքի* գործադրմամբ¹ կատարված ծանր մարմնական վնասվածք, իսկ բռունցքին փաթաթած մետաղալար գործադրելու դեպքում նրա արարքը **նույն նորմերով** կորակվեր իբրև *մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի* գործադրմամբ կատարված ծանր մարմնական վնասվածք: Երկու դեպքում էլ արարքի իրավական հետևանքը նույնն է: Հետևաբար, կասկածի սկզբունքն անծին **մեղավոր ճանաչելու** հարցում դեր չի խաղում: Նույնը վերաբերում է նաև **պատիժ նշանակելուն**, բացառությամբ եթե դատարանը կոնկրետ դեպքում ելնի նրանից, որ առարկաներից մեկի կիրառումը ավելի մեծ կամ ավելի նվազ վտանգավորություն ունի:

Եթե փաստական այլընտրանքներից մեկը համապատասխան քրեական նորմի ներքո դասելիս հանգեցնում է մի արդյունքի, որը մեղադրյալի համար ավելի բարենպաստ է, ապա որոշիչ է այդ տարբերակը: Դրա հետևանքն ամենից առաջ կարող է լինել այն, որ տարբերակներից մեկի դեպքում մեղադրյալը պիտի արդարացվի:

Խնդիր 5-ի տարբերակում այլընտրանքներից մեկի դեպքում (կաստետի գործադրում) Ա-ն պիտի դատապարտվի ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետով **և** 2-րդ մասի 6-րդ կետով, իսկ մյուսի դեպքում (կաստետի գործադրման բացակայություն) միայն ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետով: Վերջինը մեղադրյալի համար ավելի բարենպաստ է, որովհետև նրա մեղքն ավելի թեթև է, և, ամենից առաջ, հողվածի 1-ին մասով նախատեսված պատժի շրջանակն ավելի մեղմ է: Հետևաբար, վերոհիկտում արարքի իրավական գնահատականի ներքո (ՀՀ ՔրՕ 342-րդ հոդ. 3-րդ մաս) դատարանը պիտի բառացիորեն գրի, որ մեղադրյալի պատասխանատվությունը միայն ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 1-ին մասի 3-րդ կետով բխում է *in dubio pro reo* սկզբունքից:

III. Դատավճիռը

Վերոհիկտը հրապարակելուց հետո դատարանը սահմանում է լրացուցիչ դատալսումներով առաջին դատական նիստի օրը (ՀՀ ՔրՕ 344-րդ հոդ. 2-րդ մաս):

Լրացուցիչ դատալսումների ընթացքում դատարանը քննարկման առարկա է դարձնում արդեն հիմնականում իրավական հետևանքների վերաբերյալ հարցերը (տես ՀՀ ՔրՕ 345-րդ հոդ. 1-ին մասը): 345-րդ հոդվածով նախատեսված հարցերի քննարկումն ավարտելուց հետո դատարանը կայացնում է դատավճիռ (ՀՀ ՔրՕ 346-րդ հոդ. 4-րդ մաս):

In dubio pro reo սկզբունքի կիրառելիության և ճիշտ տեղում այն քննարկելու հարցը ծագում է նաև դատավճիռը կազմելիս:

1. Ապացույցների գնահատումը և հաստատված փաստերը շարադրելը

Դատարանը պարտավոր է դատավճռում **ճիշտ նույն կերպ** շարադրել այն բոլոր հարցերի պատասխանները, որոնք նա շարադրել է վերոհիկտում (համեմատիր ՀՀ ՔրՕ 342-րդ հոդ. 1-ին մասը և 348-րդ հոդ. 1-ին մասը): Ապացույցների գնահատումը պետք է շարադրվի դատավճռի նկարագրական մասում (տես ՀՀ ՔրՕ 349-րդ հոդ. 3-րդ մասը): Ու քանի որ, ինչպես վերևում արդեն նշվել է, կասկածի սկզբունքն ապացույցների գնահատման ժամանակ կիրառելի չէ, դատավորը դատավճռի նկարագրական ու պատճառաբանական մասերում չպետք է անդրադառնա *in dubio pro reo* սկզբունքին²:

¹ Կաստետը գենք է ՀՀ ՔրՕ 166-րդ հոդ. 2-րդ մասի 6-րդ կետի իմաստով: Գերմանական ՔրՕ համանման նորմի մեկնաբանությունն այդ իմաստով տես Rengier, Strafrecht Besonderer Teil II, 23. Aufl. 2022, § 14 Rn. 43; BeckOK StGB/Eschelbach, 55. Ed. 1.11.2022, StGB § 224 Rn. 27; Schönke/Schröder/Sternberg-Lieben, 30. Aufl. 2019, StGB § 224 Rn. 5.

² Ապացույցների գնահատման շրջանակում սխալ փաստարկման օրինակներ տես Գ.ԻՎ.2. կետի տակ:

Վերդիկտում քննարկվող հարցերին դատավճռում ավելանում է արարքի իրավական հետևանքների հարցը (ՀՀ ՔրԴՕ 348-րդ հոդ. 1-ին մասի 7-16-րդ կետեր):

2. Արարքի իրավական հետևանքները

Խնդիր 6: Դատարանը մեղադրյալին դատապարտում է ծանր մարմնական վնասվածք պատճառելու բազմաթիվ դեպքերի համար: Նա դատավճռում արձանագրում է. *«Թեև անչափահաս տուժողի մոտ մինչև այժմ չեն նկատվել բացասական հոգեկան հետևանքներ, բայց առկա է վերացական վտանգ, որ հանցավոր գործողությունները կարող են տևականորեն բացասաբար ազդել տուժողի հետագա զարգացման վրա: Հնարավոր չէ բացառել, որ ապագայում ի հայտ կգան զգալի բացասական հոգեկան հետևանքներ»¹:*

Կասկածի սկզբունքը կիրառելի է նաև պատիժ նշանակելու վերաբերյալ նյութական քրեական իրավունքի նորմերի կիրառման ժամանակ: Բայց չեն կարող իբրև անձի պատասխանատվությունը և պատիժը ժանրացնող հաշվի առնվել այն հանգամանքները, որոնցում դատարանը համոզված չէ²:

Խնդիր 6-ում եթե դատարանը չի կարող հաստատված համարել արարքի որոշակի հետևանքներ, ապա դա չի կարող բացասաբար ազդել մեղադրյալի վրա: Արարքի՝ ավելի ուշ ի հայտ եկող հետևանքը, որում դատարանը համոզված չէ, այլ միայն ենթադրում է, չի կարող պատիժ նշանակելիս հաշվի առնվել ի վնաս մեղադրյալի³:

IV. Կասկածի սկզբունքը վճռաբեկության փուլում

Ով հասկացել է, թե ինչպես է կիրառվում կասկածի սկզբունքը վերդիկտ և դատավճիռ կայացնելիս, ապա խնդիր չի ունենա վճռաբեկության փուլում դրա կիրառման հետ:

1. *In dubio pro reo* սկզբունքի խախտումը իբրև նյութական օրենքի խախտում

Խնդիր 7: Դ-ն դատապարտվում է գողության համար ՀՀ ՔրԴՕ 254-րդ հոդ. 1-ին մասով և 3-րդ մասի 3-րդ կետով՝ իր եղբայր Ե-ից մի թանկարժեք կտավ գողացած լինելու համար: Դատարանը դատավճռում գրում է. *«Կտավն սկզբում եղել է մեղադրյալի հոր կամ տուժող Ե-ի սեփականությունը: Դատարանը նաև հավանական է համարում, որ Ե-ն հանցանքի կատարումից մի քանի շաբաթ առաջ մահացած իր հոր ժառանգն է եղել ու այդ պատճառով դարձել է կտավի սեփականատերը: Բայց այս պահին վեճ է քննվում մեղադրյալի ու նրա եղբայր Ե-ի միջև ժառանգ լինելու հարցի վերաբերյալ, այնպես որ այս հարցը դեռ բաց է մնում»:*

Վճռաբեկ դատարանը հետազոտում է բողոքարկված դատավճիռը դրանում տեղ գտած օրենքի խախտումներ հայտնաբերելու նպատակով (ՀՀ ՔրԴՕ 387-րդ հոդ. 1-ին մաս): Սովորաբար օրենքի խախտումները ստորաբաժանվում են երկու խմբի՝

1. նյութական օրենքի խախտումներ,
2. դատավարական օրենքի խախտումներ:

Եթե կասկածի սկզբունքն իրավացիորեն հասկացվում է իբրև նյութական նորմ, ապա դրա խախտումը **նյութական օրենքի խախտում** է: Ուշադիր նայելիս կտեսնենք, որ *in dubio pro reo* սկզբունքի խախտումը նշանակում է իրավաբանական որակման (սուբսումցիայի) ժամանակ թույլ տրված սխալ. փաստորեն նյութական քրեական նորմի ներքո են դասվել փաստեր, որոնք դատավորի համոզվածության բացակայության պատճառով դատավճռի հիմքում չպիտի դրվեին: Այսպիսով, կաս-

¹ BGH NStZ-RR 2004, 41.

² BGH NStZ-RR 2001, 296; 2004, 41; BeckRS 1988, 31102000; Fischer, 67. Aufl. 2020, StGB § 46 Rn. 34 b.

³ BGH NStZ-RR 2004, 41.

կածի սկզբունքի խախտումը միշտ նաև մի որոշակի նյութական քրեական նորմի խախտում է¹:

Ինչպե՞ս պետք է վարվի վճռաբեկ դատարանը *in dubio pro reo* սկզբունքի խախտում հայտնաբերելու համար: Նա պետք է հետազոտի, թե արդյոք մեղքի ու իրավական հետևանքների մասին նյութական օրենքը ճիշտ է կիրառվել: Եվ չափազանց կարևոր է, որ վճռաբեկ դատարանը վճռաբեկ վարույթի հիմքում դնի բացառապես առաջին ատյանի դատարանի կողմից հաստատված և դատավճռում ամրագրված փաստերը, այլ ոչ թե վճռաբեկ բողոք բերողի տեսանկյունից «ցանկալի» փաստական հանգամանքները: Դա ամենից առաջ նաև նշանակում է, որ վճռաբեկ դատարանը հստակ պիտի ստուգի, թե առաջին ատյանի դատարանը ո՞ր փաստերի հարցում է համոզված եղել և որոնցում՝ ոչ: Որպես կանոն, դա պետք է ճանաչելի լինի դատավճռի նկարագրական մասի համապատասխան ձևակերպումներից, ընդ որում պարտադիր չէ «կասկած» բառի գործածությունը (օրինակ՝ «Հնարավոր չեղավ պարզել...», «Պարզ չէ...», «Դատարանը չկարողացավ համոզմունք ձևավորել այն հարցի առնչությամբ, թե արդյոք...», «Հավանաբար...», «Հնարավոր է...», «Չի կարելի բացառել, որ...»): Նման անորոշությունների դեպքում առաջին ատյանի դատարանը պետք է քրեական նորմի ներքո դասի հնարավոր համարված այլընտրանքներից ավելի նպաստավորը: Եթե վճռաբեկ դատարանը հայտնաբերում է, որ առաջին ատյանի դատարանը դատավճռի հիմքում դրել է մեղադրյալի համար ոչ բարենպաստ այլընտրանքը, ապա դա հենց *in dubio pro reo* սկզբունքի խախտում է:

Խնդիր 7-ում դատավճիռը պարունակում է նյութական օրենքի խախտում: Դ-ն չպետք է դատապարտվեր ՀՀ ՔրՕ 254-րդ հոդ. 1-ին մասով: Դատավճռով հաստատված փաստերից պարզ չէ, թե ով է եղել կտավի սեփականատերը: Քանի որ հնարավոր է, որ մեղադրյալն ինքն է դարձել ժառանգ հոր մահից հետո, ուստի հավանաբար նա է ձեռք բերել կտավի նկատմամբ սեփականությունը (ՀՀ ՔաղՕ 1184-րդ հոդ.): Այդ դեպքում կբացակայի համապատասխան «ուրիշի գույք» հատկանիշը ՀՀ ՔրՕ 254-րդ հոդ. 1-ին մասի իմաստով (տես ՀՀ ՔրՕ 3-րդ հոդ. 1-ին մասի 16-րդ կետը):

2. Դատարանի սխալը ապացույցները գնահատելի՞ս

Ապացույցները գնահատելիս դատարանի թույլ տված սխալը՝ իբրև *in dubio pro reo* սկզբունքի խախտում, վճռաբեկ բողոքում վիճարկելը հաջողություն չի ունենա, որովհետև նման դեպքերում փաստաբաններն աչքաթող են անում, որ կասկածի սկզբունքը մի իրավանորմ չէ, որը կարող է կիրառվել ապացույցները գնահատելիս: Հետևյալ օրինակները կարող են այս հարցում որոշակիություն մտցնել.

Սխալ կլինի հետևյալ փաստարկումը.

«Դատավճիռը սխալ է, քանի որ խախտվել է կասկածի սկզբունքը: Մեղադրյալը դատապարտվել է միայն տուժող Գ-ի ցուցմունքի հիման վրա: Մեղադրյալի մեղքը հաստատող այլ հանցանշաններ առկա չեն: Առկա է միայն ցուցմունք ընդդեմ ցուցմունքի...»:

Եթե առկա է «ցուցմունք ընդդեմ ցուցմունքի», և չկան մեղադրյալի մեղքը հաստատող այլ հանցանշաններ, ապա դա ու առավել ևս կասկածի սկզբունքը դատավորին չի խանգարում դատապարտել մեղադրյալին: Եթե դատավորը համոզված է մեղադրյալին ծանրաբեռնող միակ վկայի ցուցմունքի արժանահավատության հարցում, ապա մեղադրյալը շատ լավ էլ կարող է դատապարտվել այդ մի ցուցմունքի հիման վրա: Թեև վկայի ցուցմունքը նման դեպքում պետք է առավել մեծ խնամքով ստուգվի արժանահավատության տեսանկյունից, և դատարանը պետք է իր որոշման համար էական նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները հաշվի առնի ու ամբողջ ծավալով գնահատի, բայց *in dubio pro reo* սկզբունքը դրա վրա ոչ մի

¹ Eicker JA 2021, 330, 336.

ազդեցություն չունի¹:

Նմանապես սխալ կլինի հետևյալ փաստարկումը.

«Դատավճիռը սխալ է, որովհետև խախտվում է կասկածի սկզբունքը: Դատարանը չէր կարող ելնել նրանից, որ մեղադրյալն է եղել կատարողը: Նա բավարար չափով հաշվի չի առել, որ միակ վկա Թ-ն հանցագործության գոհ Օ-ի լավագույն ընկերն է: Ակնհայտ է, որ Թ-ն ցուցմունք է տվել հոգուտ իր ընկեր Օ-ի...»:

Անկախ նրանից, թե կարելի է արդյոք նշված թերության մեջ իրավական սխալ տեսնել, բոլոր դեպքերում դա ոչ մի կապ չունի կասկածի սկզբունքի հետ:

Եվ, վերջապես, փաստաբանները հաճախ սխալմամբ փորձում են կասկածի սկզբունքը կիրառել առանձին հանցանշանների նկատմամբ, ինչպես ցույց է տալիս հետևյալ նեգատիվ օրինակը.

Դատարանն իր դատավճռում հանցանքը մեղադրյալի կողմից կատարված լինելու հարցում իր համոզվածությունը մանրամասն հիմնավորում է վկաներ Ա-ի, Բ-ի ու Գ-ի ցուցմունքներով: Վկա Դ-ի մասին դատարանը գրում է. *«Թեև վկա Դ-ն մեղադրյալի օգտին ցուցմունք տվեց, որ նա հանցանքի պահին հանցանքի վայրում չի եղել, և դատարանը չի կարող որոշակիորեն արձանագրել, որ վկա Դ-ն կեղծ պնդում է արել, բայց բոլոր դեպքերում զգալի կասկածներ մնացին նրա ցուցմունքների ճշմարտացիության հարցում»:* Այստեղ փաստաբանները հաճախ տեսնում են կասկածի սկզբունքի խախտում, ինչին նպաստում է նաև «կասկած» բառի գործածությունը: Նման ենթադրությունը ձևականորեն ինքնաթելադրվում է առաջին հայացքից. *«Եթե դատարանը չգիտի, թե արդյոք վկա Դ-ն ճշմարտությունն է ասել, ապա դատարանը պարտավոր է հոգուտ մեղադրյալի ելնել հենց դրանից, ինքնին հասկանալի է»:* Այս միտքն անշուշտ սխալ է: Ինչո՞ւ: Շատ պարզ պատճառով, որի մասին արդեն բազմիցս խոսվել է. որովհետև կասկածի սկզբունքը կիրառելի չէ ապացույցները գնահատելիս ու կիրառելի չէ հատկապես նաև առանձին հանցանշանների նկատմամբ: Այդ պատճառով դատարանը շատ լավ էլ կարող է մեղադրյալի օգտին տրված ցուցմունքը կամ այն անորոշությունը, թե արդյոք այդ ցուցմունքը ճշմարիտ է, ներառել բոլոր ապացույցների ծավալի մեջ ու համակողմանիորեն գնահատել դա դատավճռի համար էական նշանակություն ունեցող մի փաստի առնչությամբ: Այս եղանակով դատարանը կարող է առանց որևէ իրավական սխալի համոզմունք ձևավորել, որ հանցանքը կատարել է հենց մեղադրյալը²:

“В СЛУЧАЕ СОМНЕНИЯ В ПОЛЬЗУ ОБВИНЯЕМОГО” (IN DUBIO PRO REO)

Гор Оганесян

Доцент кафедры немецкого и европейского конституционного и административного права, а также международного права в Университете Хагена, Адвокат, член Саксонской коллегии адвокатов, доктор юридических наук (Берлин), магистр административных наук (Шпайер)

In dubio pro reo - в случае сомнения в пользу обвиняемого. Этот основной принцип уголовного права широко известен. Но как бы ни было известно его название, его применение в армянской юридической практике в основном неизвестно. Опыт показывает, что среди юристов существует значительная неопределенность относительно его значения. Возможно, это связано с тем, что

¹ BGH NSTZ 2019, 42.

² BGH NSTZ 2001, 609; OLG Jena BeckRS 2004, 6689.

армянские юристы не занимаются им достаточно глубоко. Независимо от причин этого, данная статья призвана исправить ситуацию. Сначала принцип *in dubio pro reo* объясняется абстрактно. Затем на конкретных примерах рассматривается его применение на различных стадиях уголовного процесса, в частности при составлении обвинительного заключения, в ходе предварительного слушания и основного слушания дела, в вердикте, а также в обвинительном приговоре по уголовному делу. При этом основное внимание уделяется ошибкам, которые юристы часто допускают в этой области. Особое внимание уделяется применению принципа *in dubio pro reo* в кассационной инстанции. Таким образом, цель данной статьи - показать, как принцип сомнения может проявиться и преодолеться на практике.

“WHEN IN DOUBT, FOR THE ACCUSED” (IN DUBIO PRO REO)

Gor Hovhannisyan

Associate Professor at the Chair of German and European Constitutional and Administrative Law, as well as International Law at the University of Hagen, Attorney-at-law, Member of the Saxon Bar Association, Doctor of Laws (Berlin), Master of Administrative Sciences (Speyer)

In dubio pro reo - in case of doubt for the accused. This basic principle of criminal law is widely known. But as well-known as the name is, its application in Armenian legal practice is mostly unknown. Experience shows that there is considerable uncertainty among lawyers about its meaning. This may be due to the fact that Armenian lawyers do not deal with it in sufficient depth. Irrespective of the reasons for this, this article is intended to remedy the situation. First, the principle *in dubio pro reo* is explained in abstract terms. Subsequently, its concrete application is examined in various stages of criminal proceedings, such as the indictment, the preliminary hearing and the main hearing, the verdict as well as the criminal conviction on the basis of case studies. In doing so, it focuses on mistakes that lawyers often make in this area. Special attention is paid to the application of the principle *in dubio pro reo* in the revision. This article therefore aims to show how the principle of doubt can appear and be mastered in practice.

Բանալի բառեր – կասկածի սկզբունք, ապացուցման կանոն, որոշում ընդունելու կանոն, դատավարության նախապայմաններ, ալիբի, փաստանշան, ապացույցների գնահատում

Ключевые слова: принцип сомнения, правило доказывания, правило принятия решения, процессуальные предпосылки, алиби, косвенная улика, оценка доказательств

Key words: *the principle of doubt, rule of proof, decision rule, process requirements, alibi, circumstantial fact, assessment of evidence*